ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ
ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԱՐԳԱՑՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՅԵՏ ՅԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (PSOM) ՄԱՍԻՆ

Յայաստանի Յանրապետության Կառավարությունը եւ Նիդերլանդների Կառավարությունը, այսուհետ՝ Ստորագրող կողմեր,
որոշեցին հետեւյալը.

Կետ 1
Ծրագրի նպատակները

ա) Սույն ծրագիրը նպատակաուղղված է աջակցելու մասնավոր հատվածի զարգացմանը՝ խրախուսելով Յայաստանի եւ Նիդերլանդների գործարար հատվածների միջեւ տնտեսական համագործակցությունը եւ աջակցելով այդ համագործակցությանը հավասար գործընկերության եւ փոխադարձ շահերի հիման վրա՝ շեշտը դնելով մասնավոր ներդրումների վրա:
բ) Աջակցությունը կտրամադրվի Յայաստանի եւ Նիդերլանդների գործարար խմբերի՝ միջազգային եւ տեղական "նոու-հաու"-ի, ապրանքների եւ ծառայությունների կիրառմամբ որոշակի ոլորտներում համատեղ նորարարական փորձնական ծրագրեր սկսելու
նախաձեռնություններին:
գ) Նախատեսվում է, որ հաջող փորձերը կշարունակվեն եւ/կամ կկրկնապատկվեն մասնավոր հատվածով:
դ) Նախատեսվում է, որ գործարար բնույթի ծրագրերը պետք է նպաստեն աղքատության նվազեցմանը: Ընտրության ժամանակ նախապատվություն կունենան այն նախագծերը, որոնք կներգրավեն զգալի թվով տեղական աշխատուժ, կփոխանցեն գիտելիքներ, մեծապես կօգտագործեն տեղական փոքր եւ միջին ձեռնարկությունները (ՓՄՁ-ներ) մատակարարման գործում, կգործեն աշխարհագրորեն ոչ բարենպաստ շրջաններում, եկամտի աղբյուր կհանդիսանան մեծ թվով շահառուների խմբի համար եւ/կամ այլ եղանակներով կնպաստեն աղքատության զգալի նվազեցմանը: Այնուամենայնիվ, նախագծերը բոլոր դեպքերում պետք է ներկայացվեն հիմնավորված գործարար առաջարկների ձեւով, որոնք կստեղծեն կայուն գործարար կապեր:

Կետ 2
Բյուջե

Զարգացման պաշտոնական աջակցությունը կտրամադրվի Նիդերլանդների Կառավարության կողմից՝ Զարգացող տնտեսություն ունեցող երկրների հետ համագործակցության ծրագրի (PSOM) շրջանակներում 2005 թվականից սկսված հայ-նիդերլանդական համատեղ գործարար ծրագրերին աջակցություն տրամադրելու նպատակով: PSOM ծրագրի ընդհանուր բյուջեն 32 երկրների համար ներկայումս տարեկան կազմում է 51 միլիոն եվրո:
PSOM-ի միջին ներդրումը յուրաքանչյուր նախագծի մեջ կազմում է մոտ 500,000 եվրո, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր երկրում տարեկան իրականացնել միջին հաշվով 2-3 ներդրումային նախագիծ: Այն նախագծերի փաստացի քանակը, որոնք կարող են հաստատվել Յայաստանի համար, կախված կլինեն Յայաստանի համար ստացված առաջարկների որակից: Եթե Յայաստանի համար հաստատվի տարեկան երկուսից ավելի առաջարկ, ապա, ըստ առաջնայնության, երրորդը, չորրորդը եւ այլ առաջարկները կմրցակցեն այլ երկրներից ստացված հայտերի հետ: Ծրագիրը կգործի առնվազն երկու տարի եւ այնուհետեւ կարող է երկարաձգվել նամակների փոխանակմամբ, եթե երկու Ստորագրող կողմերը գտնեն այն շահավետ:

Կետ 3
Հարկեր

PSOM ծրագրի շրջանակներում Հայաստան ներմուծված ապրանքները կազատվեն ցանկացած մաքսատուրքից, ավելացված արժեքի հարկից կամ այլ մաքսային վճարումից: Երկու Ստորագրող կողմերը ընդգծում են "Հայաստանի Հանրապետության եւ Նիդերլանդների միջեւ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին" համաձայնագրի եւ "Ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին" համաձայնագրի արագ ստորագրման կարեւորությունը:

Կետ 4
Իրականացնող մարմին

Հայաստանի Կառավարության անունից ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը կգործի որպես ծրագրի հիմնական օղակ:
Ծրագիրը Նիդերլանդների Կառավարության անունից պետք է իրականացնի Հոլանդիայի Կառավարության գործակալությունը (EVD)՝ խորհրդակցելով Թբիլիսիում Նիդերլանդների Թագավորության դեսպանության հետ:

Կետ 5
Ծրագրի ոլորտները

Ստորագրող կողմերը կձգտեն խրախուսել նախագծերի մշակումը եւ իրականացումը հետեւյալ տնտեսական ոլորտներում (սակայն այլ ոլորտների համար նախագծային լավ առաջարկները նույնպես կքննարկվեն).
ա) արդյունաբերություն,
բ) գյուղատնտեսություն:
Աշխարհագրական առումով նախապատվություն կտրվի այն նախագծերին, որոնք իրականացվելու են Սյունիքում, Գեղարքունիքում եւ Տավուշում:
Բոլոր ոլորտներում հատուկ ուշադրություն կդարձվի ընդհանուր սոցիալական պատասխանատվության խնդիրներին: Վերը նշված նախընտրելի ոլորտները եւ/կամ մարզը(երը) եւ 1-ին կետի "դ" ենթակետում նշված աղքատության նվազեցման գործոնները հատուկ կարեւորություն կունենան նախագծերի ընտրության գործընթացում:
Հնարավորության դեպքում Ստորագրող կողմերը կօժանդակեն ծրագրի նորմալ իրականացումն ապահովելու հարցում:

Կետ 6
Առաջարկներ ներկայացնելը

Տարեկան առնվազն մեկ անգամ EVD-ն կիրավիրի ընկերություններին (դրանց կոնսորցիումներին)՝ ներկայացնելու նախագծերի հետ կապված առաջարկներ՝ հատուկ ընդգծելով 5-րդ կետում նշված ոլորտները եւ/կամ մարզը(երը): Յուրաքանչյուր կոնսորցիում կընդգրկի առնվազն մեկ հայկական եւ մեկ հոլանդական գործընկերոջ: Կոնսորցիումի հոլանդական գործընկերը դիմում կներկայացնի EVD-ին եւ կգործի որպես EVD-ի հետ կապի օղակ: Նիդերլանդների զարգացման համագործակցության նախարարի եւ EVD-ի միջեւ կնքված PSOM համաձայնագիրը մանրամասն պարունակում է այն ընթացակարգերը, որոնց միջոցով կընտրվեն PSOM առաջարկները եւ կհատկացվեն միջոցները: EVD-ն կտեղեկացնի Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարին այն առաջարկների մասին, որոնք նախատեսում են ֆինանսական աջակցության տրամադրում PSOM-ի շրջանակներում:

Կետ 7
Մոնիտորինգ

EVD-ն կիրականացնի նախագծերի մոնիտորինգ եւ առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն կներկայացնի Թբիլիսիում Նիդերլանդների Թագավորության դեսպանություն եւ Հայաստանի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարին: Դեսպանության եւ Հայաստանի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության աշխատողները կհանդիպեն առնվազն տարեկան մեկ անգամ՝ նախագծի իրականացման առաջընթացը քննարկելու նպատակով:

Կետ 8
Վեճերի կարգավորում

Սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման եւ/կամ իրականացման հետ կապված՝ Կողմերի միջեւ որեւէ վեճ պետք է կարգավորվի բարեկամաբար՝ խորհրդակցություններ եւ/կամ բանակցություններ անցկացնելու միջոցով:

Կետ 9
Ուժի մեջ մտնելը եւ տեւողությունը

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունը կստանա ծանուցում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն դրա հաստատման համար պահանջվող ներքին
վավերացման ընթացակարգերի ավարտի մասին, եւ կգործի երկու տարի ժամկետով: Ժամկետի հետագա երկարաձգումների վերաբերյալ հարցը կարող է որոշվել Ստորագրող կողմերի միջեւ՝ նամակների փոխանակմամբ:

Կատարված է Երեւանում երկու հազար հինգ թվականի հունիսի 10-ին, երկու բնօրինակով, անգլերեն:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2005 թ. օգոստոսի 15-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 17

MEMORANDUM OF UNDERSTANDING
Between the Government of the Republic of Armenia and the Government of the Netherlands on the Programme for Co-operation with Emerging Markets (PSOM)

The Government of the Republic of Armenia and The Government of the Netherlands, hereinafter referred to as "the Signatory-parties", have decided as follows:

Paragraph 1
Objectives of the Programme

a This programme aims at supporting private sector development by promoting and supporting economic co-operation between the business sectors of Armenia and the Netherlands on the basis of equal partnership and mutual benefit with a focus on private investments.

b Support is provided to initiatives of the business communities of Armenia and the Netherlands in setting up joint innovative pilot-projects in specific sectors, making use of international and local know how, goods and services.

c It is expected that successful try-outs will be continued and/or duplicated by the private sector.

d The business projects are expected to contribute to poverty alleviation. Projects creating substantial local employment, transferring knowledge, making extensive use of local small and medium sized enterprises (SMEs) in the supply chain, operating in geographically disadvantaged regions, generating income for a substantial group of beneficiaries and/or contributing in other ways substantially to poverty alleviation will receive priority in the selection process. Projects however have to be at all times sound business proposals that lead to a sustainable business relation.

Paragraph 2
Budget

Official Development Assistance will be granted by the Government of the Netherlands to provide support to joint Netherlands-Armenian business projects starting from 2005 under the Programme for Co-operation with Emerging Markets (PSOM). The total budget of the PSOM programme is currently Ս 51 million per year for 32 countries.

The average PSOM contribution per project being in the order of Ս 500,000 allows for an average 2-3 investment projects per country per year. The actual number of projects that can be approved for Armenia will depend on the quality of the proposals received for Armenia. If for Armenia more than two proposals qualify per year, the third, fourth etc. ranked proposals will compete with demands from other countries. The programme will be operational for at least 2 years and may be extended thereafter, if both Signatory-parties consider the programme to be beneficial, through an exchange of letters.

Paragraph 3
Taxes

Import of goods into Armenia within the framework of the PSOM programme will be exempted from any customs duties, value added tax or other customs charges. Both Signatory-parties underlined the importance of an early signing of the Agreement on Technical and Financial Co-operation between the Republic of Armenia and the Netherlands and the Treaty On Encouragement and Reciprocal Protection of Investments.

Paragraph 4
Executive Agency

The Programme shall - on behalf of the Government of the Netherlands - be executed by the Dutch Government Agency EVD, in consultation with the Royal Netherlands Embassy in Tbilisi.

On behalf of the Government of Armenia the Minister of Finance and

Economy will act as the focal point for the Programme.

Paragraph 5
Areas of the Programme

The Signatory-parties will endeavour to encourage the development and the implementation of projects in the following economic sectors (but good project proposals for other sectors will also be considered):

a. industry
b. agriculture

Geographically preference will be given to projects located in Syunik, Gegharkunik and Tavush.

In all sectors specific attention will be given to corporate social responsibility issues. The preferred sectors and/or region(s) (defined above) and the pro-poor aspects referred to Paragraph 1.d will receive special weight in the selection procedure of the projects.

The Signatory-parties will help, where possible, to ensure the smooth implementation of the programme.

Paragraph 6
Submission of proposals

EVD will invite at least once a year (consortia of) companies to submit proposals for projects with special emphasis on the sectors and/or region(s) mentioned in paragraph 5. Every consortium will contain at least one Dutch and one Armenian partner. The Dutch partner in the consortium will make the application to EVD and serve as the contact point with EVD. The PSOM agreement between the Dutch Minister for Development Co-operation and EVD contains the detailed procedures through which PSOM proposals will be selected and funds are allocated. EVD will inform the Minister of Finance and Economy of the Republic of Armenia about the proposals that are awarded financial contributions under PSOM.

Paragraph 7
Monitoring

EVD will monitor the projects and report half-yearly about the progress made to the Royal Netherlands Embassy in Tbilisi and the Minister of Finance and Economy of Armenia. Embassy personnel and staff of the Minister of Finance and Economy of Armenia will meet at least once a year to discuss the progress of project implementation.

Paragraph 8
Dispute settlement

Any dispute between the Signatory-parties concerning the interpretation and/or implementation of this Memorandum of Understanding shall be settled amicably through consultations and/or negotiations.

Paragraph 9
Effectiveness and duration

This Memorandum of Understanding will take effect on the date upon

which the Ministry of Foreign Affairs of the Netherlands receives a notice on completion on internal ratification procedures required for its approval under the legislation of the Republic of Armenia and will be effective for a period of two years. Further extensions may be decided by an exchange of letters between the Signatory-parties.

Done in duplicate in Yerevan on 10 June in the year two thousand and five in the English language.

The Memorandum of Understanding has entered into force on 15.08.2005.